Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

______ Վ. Կարապետյան

# ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

08.02.2017թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.02.2017թ.-ի թիվ 20 կարգադրությունը, <<Գլաձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2015-2016թ.թ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի, Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրեն՝ Ա.Հայրապետյանը և հաշվապահ՝ Ի.Հովհաննիսյանը:

**Աուդիտի հիմնական ուղղությունները.**

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

**Ընդհանուր տվյալներ.**

**Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի չորս տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի մեկ տարվա ներքին աուդիտորի աշխատանքային փորձ:**

<<Գլաձորի միջնակարգ դպրոց>> Պետական ոչ Առևտրային կազմակերպություն՝ գ.Գլաձոր:
**Գործունեության նպատակը՝** աշակերտների հանրակրթական ուսուցում:

**2015թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝**

- դասարանների թիվը - 13:
- աշակերտների թիվը - 230:
- աշակերտների միջին խտությունը - 17.7:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 76, միջին խտությունը 19.0:
Միջին դպրոց 6 դասարան, աշակերտների թիվը 103, միջին խտությունը 17.2:
Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 51, միջին խտությունը 17.0:
Աշխատողների թվաքանակը 39, մանկավարժական աշխատողների թվաքանակը 25, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 18.4, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 14, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14.0: Ընդամենը դրույքների թիվը 32.4:
Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 16.2 ժամ կամ 0.74 դրույք:

**2016թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝**

- դասարանների թիվը - 13:
- աշակերտների թիվը - 239:
- աշակերտների միջին խտությունը - 18.4:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 84, միջին խտությունը 21.0:
Միջին դպրոց 6 դասարան, աշակերտների թիվը 102, միջին խտությունը 17.0:
Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 53, միջին խտությունը 17.7:

Աշխատողների թվաքանակը՝ 39, մանկավարժական աշխատողների թվաքանակը 23, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը՝ 18.6, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 14, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14: Ընդամենը դրույքների թիվը 32.6: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 16.4 ժամ կամ 0.75 դրույք:

## 2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում

**2015թ.**

հազ.դրամ

| Ցուցանիշներ | Տարրական դպրոց | | | Միջին դպրոց | | | Ավագ դպրոց | | | Ընդհամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | |
| 1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման | 66 | 76 | X | 108 | 103 | X | 53 | 51 | X | |
| 2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի | 66 | 76 | X | 108 | 103 | X | 53 | 51 | X | |
| 3.Աշակերտների թիվը ըստ մատյանների | 66 | 76 | X | 108 | 103 | X | 53 | 51 | X | |
| 4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/ | 124000 | 124000 | | 124000 | 124000 | | 124000 | 124000 | | |
| 5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/ | 4587.2 | 2293.6 | 6880.7 | 9795.8 | 4897.9 | 14693.7 | 4978.3 | 2489.1 | 7467.4 | 29041.8 |
| 6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/ | | X | | X | X | | X | X | | 17301.6 |
| 7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 5961.2 |
| 8.Այլ լրացուցիչ պակասեցում | X | X | | X | X | | X | X | | |
| 9.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 52304.6 |
| Ըստ աուդիտի 3*4 | 4587.2 | 2293.6 | 6880.7 | 9795.8 | 4897.9 | 14693.7 | 4978.3 | 2489.1 | 7467.4 | 29041.8 |
| 6.Պահպանման ծախսեր | X | X | | X | X | | X | X | | 17301.6 |
| Այլ լրացուցիչ ավելացում | X | X | | X | X | | X | X | | 5961.2 |
| 8.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 52304.6 |
| Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/ | X | X | | X | X | | X | | | 0.0 |

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար 69,106 և 52 աշակերտ:

## 2016թ.

հազ.դրամ

| Ցուցանիշներ | Տարրական դպրոց | | | Միջին դպրոց | | | Ավագ դպրոց | | | Ընդհամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | 8 ամիս | 4 ամիս | Ընդամենը | |
| 1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման | 75 | 84 | X | 102 | 102 | X | 51 | 53 | X | |
| 2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի | 74 | 84 | X | 103 | 102 | X | 51 | 53 | X | |
| 3.Աշակերտների թիվը ըստ մատյանների | 74 | 85 | X | 104 | 102 | X | 51 | 53 | X | |
| 4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/ | 124000 | 124000 | | 124000 | 124000 | | 124000 | 124000 | | |
| 5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/ | 5206.8 | 2603.4 | 7810.1 | 9464.1 | 4732.0 | 14196.1 | 4998.5 | 2499.2 | 7497.7 | 29504.0 |
| 6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/ | | X | | X | X | | X | X | | 17726.2 |
| 7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 7764.3 |
| 8.Այլ լրացուցիչ պակասեցում | X | X | | X | X | | X | X | | |
| 9.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 54994.5 |
| Ըստ աուդիտի 3*4 | 5206.8 | 2603.4 | 7810.1 | 9464.1 | 4732.0 | 14196.1 | 4998.5 | 2499.2 | 7497.7 | 29504.0 |
| 6.Պահպանման ծախսեր | X | X | | X | X | | X | X | | 17726.2 |
| Այլ լրացուցիչ ավելացում | X | X | | X | X | | X | X | | 7764.3 |
| 8.Ընդամենը ֆինանսավորում | X | X | | X | X | | X | X | | 54994.5 |
| Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/ | X | X | | X | X | | X | | | [illegible] 0.0 |

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար 78,102 և 52 աշակերտ:

**Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը**

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել □ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ□ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:
Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

հազ.դրամ

| Անվանումը | Նախատես-ված | Ֆինանս. | Դրամարկ. ծախս ըստ հաշվետ. | Դրամարկ. ծախս ըստ աուդիտի | Փաստ. ծախս ըստ հաշվետվ. | Փաստ. ծախս ըստ աուդիտի | Շեղում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ֆինանսավորում | 58230.8 | 58230.8 | 53304.2 | 52995 | 53403.9 | 53220.5 | -5010.3 |
| Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված | 52304.6 | 52304.6 | 53304.2 | 52995 | 53403.9 | 53220.5 | 915.9 |
| Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ | 48800.0 | | 48684.4 | 48684.4 | 48684.4 | 48689.9 | -110.1 |
| Պարտադիր սոց. ապահով. վճարներ | | | | | | | |
| Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից | 3504.6 | | 4619.8 | 4310.6 | 4719.5 | 4530.6 | 1026 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 200 | | 90.1 | 90.1 | 90.1 | 90.1 | -109.9 |
| Կենցաղ և հանրային սննդի նյութեր | 200 | | 1487.2 | 1487.2 | 1487.2 | 1487.2 | 1287.2 |
| Հատուկ նպատ.նյութեր | 300 | | 144.1 | 144.1 | 144.1 | 144.1 | -155.9 |
| Այլ ծախսեր | 1374.6 | | 489.8 | 180.6 | 489.8 | 180.6 | -1194 |
| Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր | | | | | | | |
| Ներքին գործուղումներ | | | | | | | |
| Կապի ծառայության վճարներ | 100 | | 49.5 | 49.5 | 56.4 | 56.8 | -43.2 |
| Կոմունալ ծառայությունների վճար | 630 | | 2359.1 | 2359.1 | 2451.9 | 2571.8 | 1941.8 |
| Էլ. էներգիայի ծախսեր | 500 | | 63.9 | 63.9 | 160.4 | 157.8 | -342.2 |
| Վառելիքի և ջեռուցում ծախսեր | | | 2295.2 | 2295.2 | 2291.5 | 2414 | 2414 |
| Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար. | 30 | | | | | | -30 |
| Այլ ծախսեր | 100 | | | | | | -100 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայ. | 700 | | | | | | -700 |
| Բանկի տոկոս | | | | | | | 0 |
| Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց. | 4206.7 | 4206.7 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր* | 1630.6 | 1630.6 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր** | 88.9 | 88.9 | | | | | 0 |
| | | | | | | | |

* ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 1630.6 հազ.դրամ /69 աշակերտ/, ֆինանսավորվել է 1630.6 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 1510.8 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 1510.8 հազ.դրամ, մնացորդը՝ 119.8 հազ.դրամ:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2016թ.

հազ.դրամ

| Անվանումը | Նախատես-ված | Ֆինանս. | Դրամարկ. ծախս ըստ հաշվետ. | Դրամարկ. ծախս ըստ աուդիտի | Փաստ. ծախս ըստ հաշվետվ. | Փաստ. ծախս ըստ աուդիտի | Շեղում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ֆինանսավորում | 60239.3 | 60239.7 | 55443.3 | 55443.3 | 54474.2 | 54309.9 | -5929.4 |
| Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված | 60230.3 | 54994.5 | 55443.3 | 55443.3 | 54474.2 | 54309.9 | -5920.4 |
| Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ | 49104.2 | | 49388.2 | 49388.2 | 48967 | 48817.6 | -286.6 |
| Պարտադիր սոց. ապահով. վճարներ | | | | | | | 0 |
| Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից | 11126.1 | | 6055.1 | 6055.1 | 5507.2 | 5492.3 | -5633.8 |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 200 | | 26.5 | 26.5 | 26.5 | 26.5 | -173.5 |
| Կենցաղ և հանրային սննդի նյութեր | 2100 | | 1920.9 | 1920.9 | 1920.9 | 1920.9 | -179.1 |
| Հատուկ նպատ.նյութեր | 488.9 | | 354.7 | 354.7 | 354.7 | 354.7 | -134.2 |
| Այլ ծախսեր | 1733.6 | | 91 | 91 | 91 | 91 | -1642.6 |
| Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր | | | | | | | 0 |
| Ներքին գործուղումներ | | | | | | | 0 |
| Կապի ծառայության վճարներ | 100 | | 73.1 | 73.1 | 66.2 | 67.8 | -32.2 |
| Կոմունալ ծառայությունների վճար | 5803.6 | | 3588.9 | 3588.9 | 3047.9 | 3031.4 | -2772.2 |
| Էլ. էներգիայի ծախսեր | 500 | | 178.3 | 178.3 | 162.7 | 146.2 | -353.8 |
| Վառելիքի և ջեռուցում ծախսեր | 5235.8 | | 3385.6 | 3385.6 | 2860.2 | 2860.2 | -2375.6 |
| Կոմունալ ծառայությունների վճար | 30 | | 25 | 25 | 25 | 25 | -5 |
| Այլ ծախսեր | 37.8 | | | | | | -37.8 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայ. | 700 | | | | | | -700 |
| Բանկի տոկոս | | 0.4 | | | | | 0 |
| Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց. | | 5235.8 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր * | 9.0 | 9.0 | | | | | 0 |
| Այլ ծրագրեր ** | | | | | | | 0 |
| | | | | | | | 0 |

* <<ԱՅԲ>> հիմնադրամի կողմից <<Կենգուրու>> մրցույթ անցկացնելու համար հատկացված գումար:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

| | Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար. | | Սոց ապահ. վճարներ | | Կապի ծառայութ. | | Էլ էներգ. ծախսեր. | | Գազ | | Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | D | K | D | K | D | K | D | K | D | K | D | K | D | K |
| Սն.01.01.15թ. | 5.5 | | | | 2.0 | | 26.7 | | | 552.9 | | | 34.2 | 552.9 |
| Շրջանառություն 2015թ. | 48684.4 | 48689.9 | | | 49.5 | 56.8 | 63.9 | 157.8 | 2295.2 | 2414.0 | 1902.0 | 1902.0 | 52995.0 | 53220.5 |
| Սն.01.01.16թ. | | | | | | 5.3 | | 67.2 | | 671.7 | | | 0.0 | 744.2 |
| Շրջանառություն 2016թ. | 49388.2 | 48817.6 | | | 73.1 | 67.8 | 178.3 | 146.2 | 3385.6 | 2860.2 | 2418.1 | 2418.1 | 55443.3 | 54309.9 |
| Սն.01.01.17թ. | 570.6 | | | | | | | 35.1 | | 146.3 | | | 570.6 | 181.4 |

Առ 01.01.17թ. դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 570.6 հազ.դրամ / եկամտային հարկ /: Կրեդիտորական պարտքը կազմում է 185.8 հազ.դրամ / 4.4 հազ.դրամ՝ սոցիալական վճար, 35.1 հազ.դրամ՝ էներգետիկ ծառայություններ և գազի ծառայություններ՝ 146.3 հազ.դրամ/:

Հաշվապահական հաշվեկշիռ                    Ձև N 1
առ. 01.01.2016թ. - առ 01.01.2017թ.

հազ.դրամ

| Ակտիվ | Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության | Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի | Շեղում |
|---|---|---|---|
| Ոչ ընթացիկ ակտիվներ որից | 7577.8 | 7577.8 | 0 |
| հիմնական միջոցներ | | | 0 |
| մն.արժ. | 7577.8 | 7577.8 | 0 |
| արժեքը | 7577.8 | 7577.8 | 0 |
| մաշվածություն | | | 0 |
| Ընթացիկ ակտիվներ որից | 7402.2 | 7402.2 | 0 |
| Նյութեր | | | 0 |
| փոքրարժեք և արագամաշ առարկաներ | 2184.6 | 2035.2 | -149.4 |
| մն.արժ. | 0 | 0 | 0 |
| արժեքը | | | 0 |
| մաշվածություն | | | 0 |
| կարճաժամ. դեբիտ.պարտքեր | 421.2 | 570.6 | 149.4 |
| որից հաշ. տրված կանխ.վճ.գծ. | | | 0 |
| հաշվ. գնորդ. և պատ. հետ | | | 0 |
| Հաշվ.սոց.ապահ. և ապահովության գծով | | | 0 |
| Հաշվարկներ անձնակազմի հետ | | | 0 |
| Հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով | | | 0 |
| հաշվարկներ բյուջեի հետ | 421.2 | 570.6 | 149.4 |
| հաշվարկներ հաշվետու անձանց հետ | | | 0 |
| հաշվ տարբ. դեբիտ. հետ | | | 0 |
| դրամական միջոցներ, որից | 4796.4 | 4796.4 | 0 |
| դրամարկղ | | | 0 |
| հաշվարկային հաշիվ | 4796.4 | 4796.4 | 0 |
| Հաշվեկշիռ | 14980 | 14980 | 0 |
| Պասիվ | | | 0 |
| Սեփական կապիտալ որից՝ | 14798.6 | 14794.2 | -4.4 |
| Լրացուցիչ կապիտալ | 14798.6 | 14794.2 | -4.4 |
| Հաշվետու տար.չոգ. զուտ շահ. | | | 0 |
| Նախ. կար. չոգ. զուտ շահ. | | | 0 |
| Եկամ. վերաբ. շնորհ. | | | 0 |
| Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր | 181.4 | 185.8 | 4.4 |
| այդ թվում | | | 0 |
| հաշվարկ. մատակ.և կապալ. հետ | | 181.4 | 181.4 |
| հաշվարկներ բյուջեի հետ | | | 0 |
| Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ. | | 4.4 | 4.4 |
| այդ թվում տույժեր և տուգանքներ | | | 0 |
| Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով | | | 0 |
| հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ | 181.4 | | -181.4 |
| հաշվարկներ հաշվետու անձանց հետ | | | 0 |
| Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից | 0 | 0 | 0 |
| գալիք ժաման. եկամուտներ | | | 0 |
| Հաշվեկշիռ | 14980 | 14980 | 0 |
| | | | |

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

առ. 01.01.2016թ. - առ 01.01.2017թ.

Ձև N 4

հազ.դրամ

| Ցուցանիշների անվանումը | Տող | Գումարն ըստ հաշ. | Գումարն ըստ աուդիտի տվյալների | Շեղում |
|---|---|---|---|---|
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | 010 | 5235.8 | 5235.8 | 0.0 |
| գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | | | | |
| Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից | 020 | 54994.5 | 54994.5 | 0.0 |
| Ապրանքների իրացումից | 030 | | | 0.0 |
| Ընթացիկ այլ ակտիվների իրացումից | 040 | | | 0.0 |
| Ստացված կանխավճարներից | 050 | | | 0.0 |
| Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից | 060 | | | 0.0 |
| Գործառնական այլ գործունեությունից | 070 | 9.4 | 9.4 | 0.0 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր | 080 | 55003.9 | 55003.9 | 0.0 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր | | | | |
| Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց | 090 | | | 0.0 |
| Ապրանքների ձեռք բերման դիմաց | 100 | | | 0.0 |
| Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց | 110 | 6055.1 | 6055.1 | 0.0 |
| Տրված կանխավճարներ | 120 | | | 0.0 |
| Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց | 130 | 49388.2 | 49388.2 | 0.0 |
| Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով | 140 | | | 0.0 |
| Առհաշիվ տրված գումարներ | 150 | | | 0.0 |
| Վճարումներ բյուջե | 160 | | | 0.0 |
| Գործառնական այլ գործունեության նպատակով | 170 | | | 0.0 |
| Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր | 180 | 55443.3 | 55443.3 | 0.0 |
| Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր | 190 | -439.4 | -439.4 | 0.0 |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ | | 4796.4 | 4796.4 | 0.0 |

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյանս, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանս, Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Գլաձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015-2016թ.թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2017թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսա-

կան հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք ներքին աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կողմից կազմակերպության հաշվապահական հաշվառման գործունեությունը գնահատվել է բավարար: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

2015-2016թ.թ. ուսումնական տարում ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 16.2 ժամ կամ 0.74 դրույք: 2016-2017թ.թ.-ին՝ 16.4 ժամ կամ 0.75 դրույք: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2016-2017թ.թ.-ին 2015-2016թ.թ. նկատմամբ աճման տենդենց է կրում:

Կազմակերպության առ 01.01.2017թ.-ի դրությամբ կրեդիտորական պարտքը աուդիտի հաշվետվությամբ կազմում է 185.8 հազ.դրամ, դեբիտորական պարտքը՝ 570.6 հազ.դրամ, դրամական մնացորդը՝ 4796.4 հազ.դրամ: 185.8 հազ.դրամի կրեդիտորական պարտքը դրամական մնացորդով ամբողջությամբ ապահովված է: Առ 01.01.2017թ.-ի դրությամբ դրամական միջոցների ազատ մնացորդը կազմում է 5181.2 հազ.դրամ:

**Արձանագրված թերություններ և խախտումներ**:

Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները ամբողջ ծավալով չեն օգտագործվել: Արդյունքում կուտակվել է 4796.4 հազ.դրամի դրամական մնացորդ:

Կազմակերպությունը չունի որակավորված գնումների համակարգող, որի արդյունքում 2016 թ.-ին կայուն դպրոցական սնունդ ծրագրով նախատեսված ապրանքների գնում կատարելու ընթացակարգը մասնակիորեն չի համապատասխանում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

**Առաջարկվեց դպրոցի տնօրենին՝**

ա/ Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները օգտագործել ամբողջ ծավալով, թույլ չտալ դրամական ազատ միջոցների տարեվերջյան կուտակում: (Առաջարկությունների դասակարգման փոքր չափանիշ):

բ/ Գնման գործընթացը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու համար ապահովել գնումների համակարգողի առկայություն: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Խ. Խաչատրյան

Դպրոցի տնօրեն՝ Ա. Հայրապետյան

Հաշվապահ՝ Ի. Հովհաննիսյան